

## ՀԱՄԱՌՈՒՍ ԼՈՒՐԵՐ

## ԱՐՎԵՍՏ ԵՎ ԿՈՒԼՏՈՒՐԱ.

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳՐՈՂՆԵՐԻ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՆԱՆ ԽՈՐՀՀՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ.— Երեք օր տեսք սկսնակ և երիտասարդ գրողների ռեսպուբլիկական շրորորդ խորհակացությունը, որին մասնակցում էին ավելի քան վաթում երիտասարդ ու սկսնակ գրողներ, որոնց ստեղծագործությունները լույս են տեսել պարբերական մամուռամ կամ առանձին դրերով:

Երիտասարդ դրամատորգների ստեղծագործությունների մասին զեկուցեց ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Ռ. Զարյանը:

Երիտասարդ բանաստեղծների ստեղծագործությունների մասին զեկուցումով հանդես եկած «Գրական թերթ»ի խմբագիր Վ. Մնացականյանը, իսկ երիտասարդ արձակագիրների մասին զեկուցեց ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Հ. Մկրտչյանը:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ.— Երևանում ունեցած ճարտարապետների տան բացումը՝ Դա մեծ իրադարձություն է ռեսպուբլիկայի կուլտուրական կյանքում։ Ճարտարապետների տան նոր երկարականի շենքը լուսավոր է ու ընդարձակ օժտված բոլոր հարմարություններով։

Երկրորդ հարկում տեղավորված է դահլիճը, որը ունի 150 տեղ, այնուհետև գալիք է ցուցահանդեսային սենյակների շարքը։ Առաջին հարկում տեղավորված են ընթերցարանը, գրադարանը, նկարչական և ջրանկարչական ստուգին և սուսպիրները։ Ծննդի ներքին ձևավորումը կատարված է գեղարվեստական մեծ ճաշակով։

ԳԻՐԺ. ԳԱՐԵՆԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ.— Հայկական ՍՍԴ Գիտությունների ակադեմիայի Պատմության

ինստիտուտը 1949 թվին սկսեց նրեանից դեպի արևելք՝ Գեղամա լեռների ստորոտում գտնվող Գառնիի ջին ամրոցի և բնակավայրի հնագիտական պեղումներ։

Հայկական ՍՍԴ Գիտությունների ակադեմիայի հրատարակությունը վերջերս լույս է ընծանել պատմական գիտությունների թեկնածու, հնագիտ Բ. Առաքելյանի «Գառնի հնագիտական պեղումների մասին (1949—1950 թ. թ.)» գիրքը։ Նախարանում տրված է Գառնիի ամրոցի և բնակավայրի նկարագրությունը մինչև պեղումները, այնուհետև բերված են արշավախմբի նյութերը Հայաստանի նյութական կուտուրայի այլ հուշարձանների մասին։

ՀՈՐԵԼՅԱՆԱԿԱՆ ԵՐԵԿՈՆ.— Ապրիլի 16-ին, Հայաստանի Սովետական գրողների միությունում կայացավ երեկոն նվիրված արձակացիր Հմայակ Միրասի 50-ամյակին։

Հմայակ Միրասի կյանքի և գրական գործունեության մասին զեկուցեց ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Ս. Բաղյանը։

Հորելյան ուղղված ողջույնի ջերմ խոսքեր ասացին Հայաստանի Սովետական գրողների միության, երևանի կայազորի, Հայաբետհրատի ներկայացուցիչները և «Գրական թերթ»ի, «Առաջնական գրականություն» և արվեստ» ամսագրի խմբագրությունների աշխատակիցներուն։

Այնուհետև ընթերցվեցին Հորելյանի հասցեով ստացված բազմաթիվ հեռագիրներ, որից հետո շնորհակալական խոսքով հանդես եկավ Հմայակ սիրասը։ Վերշում տեղի ունեցավ համերգ։

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

ՄՍԻ ԵՎ ԿԱՓԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆՈՐԱԿԱՌՈՒՑՆԵՐԻՆ.— Ղափանում սկսվել է մասի կոմբինատի շինարարությունը։ Այժմ այստեղ տարվում են շինարարական հրապարակի պլանավորման աշխատանքները, զգվում է շենքի հիմքը։

Երևանում կառուցվելու է ռեսպուբլիկայում ամենամեծ մասի կոմբինատը։ Մոտավոր ժամանակակից աշխատանքները կանուգում են շինարարական աշխատանքները։

Կիրովականում այս տարվա վերջին օգտագործման կհանձնվի հզոր մասի կոմբինատ։ Այստեղ արգելն ավարտված են շինարարական աշխատանքները, այժմ տարվում են շենքի սարքավորման աշխատանքները։

Լենինականում կառուցվում է կաթի կոմբինատ սասաւարանով հանդերձ։ Այստեղ պետք է պատրաստվեն կարագ, յուղ, պաղպաղակ և այլ կաթնամթերքներ։ Հիմնական արտադրական շինության շինարարական աշխատանքներն արգելն ավարտված են։

Էլեմենտնի շրջանում կառուցվում է խոշոր թունաբուժարան։ Երկու թունանոցներ արդեն հանձնված են օգտագործման։ Ներկայում Սիսիանի, Ղոկայանի, Թալյին և Կալմակովի շրջաններում սկսվել է շվեյցարական պանիր պատրաստող պանրագործարանների շինարարություն։

ՆՈՐ-ՐԱԶԱԶԵՏԸ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ է.— 1951—1952 թվերի ընթացքում նոր-թայալետի քաղսովետի դործ-

կոմը մեծ աշխատանք է կատարել թագավիր ռարեկարդ-ման ուղղությամբ: Ծարուժակվում է թագավիր արևել-յան մասի փողոցների ասֆալտապատումը: Հիմնադր-վում է ջոր ջրան կայան թագավիր արգիները և կա-նաչ տնկիները ջրով ապահովելու համար: Նոր-Բայա-զերը կարգարակի բնակելի և արտաքրական գեղեցիկ շենքերով: Ուժեղացված թափով է գնում անհատական բնակարանային շինարարությունը: 50 անհատական կառուցողներ պետությունից ստացել են 500.000 ռուբ-լի երկարատև վարկ: Նոր-Բայազերի բարեկարգման համար ընթացիկ տարում պետք է ժամանակն կրկնակի շատ միջոցներ, քան անցյալ տարի:

**ՓՈՂՈՑՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ:—** Երևանում լայն թադ են ստացել փողոցների բարեկարգման աշխատանքնե-

րը: Մայիսի 1-ին կսկսվի երթևեկությունը Ստամբիկ պողոտայի՝ Կարմիր Թանեակի փողոցից մինչև Հաղթա-նակի կամուգչուն ընկած տեղամասում: Այժմ տևուել գումար են սալարկման և ասֆալտապատման աշխա-տանքները Հրազդանի աշ ափին, Մանկական երկա-թուղու շրջանում աշխատանքներ են տարվում օձակ-ձանապարհի ասֆալտապատման ուղղությամբ: Աս-ֆալտապատվում է նաև Բաղրամյան փողոցի շարունա-կությունը ավելի քան 1 կմ: Երկարությամբ թաղաքում ավարտվում են ծառերի տնկման զարնանային աշխա-տանքները: Ընդամենը պետք է տնկվի 300.000 տնկի և 200.000 թուփ: Կանաչապատման տրեստի շիրմոցնե-րում պատրաստվում են ծաղիկների սածիներ զբույ-գիների և ծաղկանոցների համար:

### ՈԽՍՊՈՒԹԼԻԿԱՅԻ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

**ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԱԺԳԵԳՈՐԾՈՒԹՅԱՆԸ:—** Փարավար գյուղում տեղակարգած է Հայկական ՍՍՌ Գիտություն-ների ակադեմիայի Պտղաբուժության ինստիտուտի հիմնական համարածուային այգին: Այստեղ սկսվել է պտղատու ծառերի տնկումը: Այս այգում անց է կաց-վում պտղատու ծառերի նախական փորձարկումը ա-մենապիտանի տեսակների ընտրության և կոլեկտիվ տնտեսություններում նրանց արմատացման համար: Ինստիտուտի տնկարաներում անցկացված են տասնյակ հազարավոր տնկիներ այս տարվա համար:

Պտղաբուժության ինստիտուտի լեռնային բաժնը կենսականում անցնորդ է պտղատու ծառերի նոր իմա-լածնված տեսակներ՝ ուսապուրվակայի լեռնային շրջան-ների համար: 16 այդպիսի ինճորինու, տանձենու և սալորինու տեսակներ, որոնք աշքի են ընկնում իրենց ցրտաքմաց կունությամբ, բարձր բերքատվությամբ և համեղությամբ, կտնկվեն լեռնային շրջանների մի շաբաթ կորիկիվ տնտեսություններում:

Ինստիտուտի այգիներում ու տնկարաններում հա-վարված են պտղատու ծառերի տարրեր տեսակներ 2.500 անունից ավելի, այդ թվում հազարից ավելի տեղական տեսակներ:

**ՆՈՐ ՀՈՂԾԻ ՈՒ-ՈԿՄԱՆ ՀԱՄԱՐ:—** Արտաշատի շրջանի կոլեկտիվ տնտեսությունները յուրացնում են խոպան և անջրդի հողերը՝ վերածելով գրանք պտղա-տու և խաղողի արգիների, բամբակի դաշտերի Սկրս-վել է Դվինի ջրանցքի կառուցումը: Նա կոռոգի մոտ 1.000 հեկտար առաջ շօգտագործված հողային տարա-ծություն: Արտաշատի շրջանում գյուղատնտեսության կարիքների համար ավելի ու ավելի լայնորեն են սկ-սում օգտագործել էլեկտրական էներգիան: Էլեկտրի-ֆիկացիայի հիմքի վրա տարվում է Մասիսի, Բաղրամյանի և Արտաշատավանի շրջան կայանների շինարա-

րությունը, որոնք Հրազդան գետից չորս կուղան գե-պի նոր յուրացված հողերը նոր շրջան կայանները կոռոգեն Միջյան, Մասիս, Բուրաստան, Ազատավան, Ներքին Զամարլու, Բաղրամյան, Գալար, Արտաշատու-ման, Ոստան, Շահումյան գյուղերի հողերը՝ ընդա-մենը 3.000 հեկտար:

**ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻՆ ՕԳՆՈՒՄ ԵՆ ԿՈԼԵԿՏԻՎ ՏՆՏԵՍՄԱ-ՔԾՈՒԽՆԵՐԻՆ:—** Ռեսպուբլիկայի Մինիստրների Սովե-տին կից Բամբակագործության գվազվոր վարչության հետ միասին, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակա-դեմիայի Գինետիկայի ինստիտուտի գիտական աշխա-տությունները Արտաշատի, Զանգիբրասարի, Վեդու, Հոկտեմ-բրյանի, Էջմիածնի շրջանների 12 կոլեկտիվ տնտե-սություններում կատարում են լայն արտադրական փորձեր բամբակնու երկարբանի տանիք ուղղությամբ: Յանքի այդ նոր մեթոդը թուլ է տալիս մեխանիզա-ցիայի ավելի լայն կիրառում դաշտերի մշակման ժա-մանակ և բարձրացնում է բամբակի բերքատվությունը:

Սպիտակի և Ախուցյանի շրջանի շատ կոլեկտիվ տնտեսություններում ինստիտուտի աշխատակիցները Գյուղատնտեսության մինիստրության հետ միասին օգ-նում են կոլտնտեսականներին շաքարի ճակնդեղի ցան-քի նոր մեթոդի լուրցման գործում:

Այդ նոր մեթոդը հարավորություն է տալիս լուրա-քանչուր հեկտարում 70—80 հազար բույսի փոխարեն անեցնել 120—140 հազար:

Ուսումնամիեւով հատիկավոր կուլտուրաների բեր-քատվության բարձրացման հարցը, ինստիտուտի աշխատակիցները նոր տեսակներ են ստանում, որոնք փորձարկվում են ուսուպուրվակայի լեռնային շրջաննե-րում:

ՆՈՐԱԾՈՒՅԵԿ ԱՆՏԱԲՐ. — Ութ տոմիս և անցել այն ժամանակվամից, երբ Զրաշնի մերկ, բռապահնությունից զուրկ լանջերում սկսվեցին հողային աշխատանքները: Գետինչ մաքրվում էր քարերից, երևան էին գալիս ոչ մեծ, հորիզոնական փոսեր: Այժմ այդ տեղամասերում վերջացել է անտառատնկումը: 300 հեկտար տարածության վրա տնկված են մոտ 2,5 միլիոն տարբեր տեսակի տնկելեր: 60 հեկտար զարգացրել են պտղատու այգիները, որտեղ տնկված են ծիրանի, խնձորենի, տանձնի և այլ պտղատու ծառեր: Գլխավոր Հիմունաբանոց ժառուղու երկու կողմերում, ուղիղ գծերով անկված են ընկուզենու տնկիներ: Նորատունկ անտառի ոռոգման համար Ստալինի անվան ջրանցքում կառուցված է էլեկտրական ջրհան կայան, որը խողովակներով ջուրը բարձրացնում է 120 մետր բարձրությամբ: Այնուհետև ջրհան ավազանից ջուրը տարբեր կարվածքի խողովակներով և ցեմենտապատ առողմերով տարածվում է նորատունկ անտառում:

Կանցնի մի քանի տարի և երևանի հարավ-արևելյան գտնվող (Արտաշատի խճուղու մոտ) Զրաշնի դեռևս մոտիկ անցյալում մերկ լանջերը կծածկվեն անտառով:

ԱԿՈՒՄԲՆԵՐ ԵՎ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ. — Անընդհատ ընդարձակվում է Ղափանի շրջանի կուսուր-լուսավորական ձեռնարկությունների շանցը: Այստեղ գործում են ավելի քան 90 ակումբ, գրադարան և կուսուրայի

ուուն: Վերցին տարվա ընթացքում 15 գյուղերում բաց են արված նոր գրադարաններ, որոնք ունեն 200.000-ից ավելի գիրք: Միայն անցյալ տարի գյուղական գրադարաններն ստացել են 20.000 գիրք՝ գեղարվեստական, քաղաքական և գյուղատնտեսական բովանդակությամբ: Կոլտնտեսային ակումբներում կանոնավոր կերպով անց են կացվում գասախոսություններ՝ զեկուցումներ տարրեր թեմաներով:

ԲԱՆԱԳՈՐՆԵՐԻ ԱՄԱՆԱՑԻՆ ՀԱՆԳՍԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ. — Գոնավոր մենազների արդյունաբերության բանվորների արհեստակցական միության սեպուրիկական կոմիտեի 1952 թվի բյուջեն մեծ գումարի է համարվել: Այս տարի պետական սոցիալիստական ապահովագրության միջոցներից մի քանի միլիոն պետք է ծախսվի բանվորների ամառային հանգստի կազմակերպման և նրանց արվելիք զանազան նպաստների վրա: 320 լեռնագործներ կմեկնեն Սովետական Միության լավագույն առողջարանները: 85 մարդ արդեն գտնվում են բուժավայրերում: 900 բանվորներ և ծառայողներ իրենց արձակուրդները կանցկացնեն սեպուրիկական հանգստի տներում: Արհեստակցական միության կողմից առանձնացված է 600.000 սուրբ պիտիներական ճամբարների շենքերի հիմնական վերանորոգման համար:

Դաֆնանի և Ալավերդու հանքերում աշխատում էն գիշերային սանատորիաներ, որտեղ հանգստանում են բանվորներն ու մասնագետները:

